

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՐԻ ԽԱՐԱՐ	
ՎՊՈՒՆԱՆ	Քր. 1.50
ՎՊՈՒՆԱՆԻ ԳՈՐԾ	2
ԱՐԱՄԱՏԱՆԻ	2.50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չէն զրկուիր :
Նամակ գրամ կայն զրկել հե-
տեւեալ հասցէին ,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ , ԿԱՏԱԿ Ի
ՎՊՈՒՆԱՆ (ՊԱՐԿԱՐԻՄ) :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՀԻՆՇԱՐԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на еписаннето

„ТАДАГЪ“

ВАРНА (България).

Հաւոր 7 1/2 Սանթիմ

Administration du journal

« GABAG »

VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Սաւաւորը կը բացուի, ժամանակ է զարթեալ :

Բաւական է որչափ կոյր ու խուլ մնալ յինք, անմիտ ու անզգայ գտնուեցանք մեր շուրջը դարձած հոնգամանքներուն առջեւ : Անցեալի խաղաթիւններէն եւ դատաւարտելի սխալներէն խրատուինք, զի ժամանակը արթնութիւն կը պահանջէ մեզմէ, հնազանդիլ հարկաւոր է ժողովուրդի ձայնին, ժողովուրդին՝ որ մեա համուռ Միոյնութիւն կ'ազազակէ, Միութիւն՝ որ լինի մարտը, սուրբ :

Բանանք աչքերնիս տեսնելու, բանանք ունեւնիս բերու, բանանք մաքրելիս ի մանաւրէն և վերջապէս անկեղծաւոր ու անխորտակ կերպով բանանք հոգինիս զգալու թէ ինչեր ու ինչեր կը դառնան :

Սա ստոյգ է թէ՛ ժամանակը երկունքի մէջ է, մեզի բազմապիսի ու մեզմէ աւելի բազմաւոր ազգութիւնք պատարագաւորեան մէջ են, իւրաքանչիւրն ալ կ'երազ ու խանձարուրով զբաղուլ են իրենց մանուկ բազմը պատուաւրու համար, իսկ մենք Հայերս « քրտակալ » ծաղրանկարէն կամ ժրնէվէն եկած թուղթէ « Դրօշ » չախէն կ'ապասեմք ումեն բան :

Ո՛վ պատկառելի կամ չպատկառելի գործիչներ, կեդրոնական ու չկեդրոնականներ, ենթագրական հասոյթներով, երեւակայական ծրագրերով, անխելք ու ազգասպան ցոյցերով ժողովուրդը չը խարենք և աւերակներով չը պարծինք, այլ քիչ մ'ալ իրականին հետեւինք և հանրային շահուն առջեւ անձնական նրկատւմենք մոռնալով հայրենիքի փրկութեան իսկապէս միջոցներն խորհինք և ըստ այնմ յարկնք ու հետեւինք դրօշին որ տեսն միայն կ'արժէ անար սող սուրբ մակդիրը և մարտը անունը, զի եթէ հին դիմը պահենք եւ միեւնոյն ընթացքը շարունակել ուզենք, դա սուրբ չէ այլ բացէ ի բաց պիղծ եւ ազգազա :

Կաւկասէն մինչ Ասորիք եւ Միջերկրականէն յԱլեւ ծով արիւն կուլայ, այս ար Հայութիւնը ամբողջ միութիւնի վրայ նստած օրհասական աղօթքը կը կարդայ, ոչ թէ ազգային ու հայկական այլ եւ մանանեխի չափ մարդկային զգացում ունեցողին հաւար ամօթ ու նախատիք է լուռ կամ անտարբեր մնալը իրողութեանց առջեւ, դործուած զարհուրելի եղեւնագործութեանց հանդէպ :

Արդարեւ, կար տեսն մը որ Հայը կրնար թուրքին հետ աստիճան մը յար-

մարիլ, միեւնոյն բարբարոս թուրքը նու
բէն կը կողոպտէր, նորէն կ'աւերէր,
սակայն մեր պապեր եւ անոնցմէ ալ ու
սանեւրով մենք կարող կ'ըլլայինք տաւ
բեր կերպով մը իրենց ձեռքէն խելու,
սակայն այդ օրերը անցան գնացին այլ
եւս անդառնալի: Թուրքը Հայուն եւ
Հայը թուրքին փոխադարձաբար ոչ մի
ժամանակ բարեկամ չեն կրնար ըլլալ
ասիէ ետքը եւ եթէ ըլլալ ալ ձեւացուի,
չի կրնար անկեղծ համարուիլ, որովհե
տեւ վտահովիւնը երկուստէք ալ վեր
ցած է եւ ահա առոր համար է որ նոր
ուժերով զինուիլ հարկաւոր է եւ այդ
զէնքն ալ ժողովուրդին պահանջած ընդ
հանուր Միութիւնն է:

Միութիւն անունը ինքնին անլիճելի
հարկ մ'է մեզ հայերուս համար, զի ար
դէն թշնամիին բազդ ատմամբ ակար ժս
զովուրդ մը ըլլալով, եղած փոքրիկ ոյժն
ալ անաւարակոյս իւր բաժանմամբ կրնայ
աւելի ակարանալ ու փոխանակ օգուտ
բերելու աւելի փնասակար դառնալ ինչ
պէս փորձերը ցոյց տուին կենդանի պատ
կերներով:

Կան նաեւ կարգ մը անանուոն ու ան
ժանօթ մարդիկ որոնք իրենք իրենց յե
ղափոխական անունը տալով կը խաղան
ազգին ճակատագրին հետ եւ որոց շատ
անախորժ կուգայ Միութեան ձայնը,
մինչեւ իսկ փրփուրի բերան կը հայհոյեն,
կ'անարգեն խոյսաւտակ ամականներով
Միութիւն պահանջող ժողովուրդին,
չեն ուզեր Միութեան գծովքովին տակ
մանել, այլ միշտ կ'ուզեն մութին ներքեւ
իրենց ոչնչութիւնը ծածկել եւ միամիտ
ու ապուշները շահագործել իրենց հա
ճոյքները կատարելու համար:

Հաղիւ թէ Պօլոյ հայութիւնը հան
դարտած եւ վերադարձող թշուառ դաղ
թախանք՝ շունչ առնել սկսած էին, ահա

բռնի դրամ պահանջելու ամենալատ ըս
պառնալիք ու ոճիրը կ'սկսի խեղճ տգր
գարագաշեանէն դուռ բացուելով, բար
բարոս թուրք կառավարութեան տեղի
չը տրուի, անմեղները կը ձերբակալուին,
կը խուզարկուին ու Պօլիսը կրկին այլ
կոծութեան մէջ կ'իյնայ, ահա սարսափի
կենթարկուի, ահա պատկառելի տեսա
կէն նոր գործ. Հնչակեանք՝ Արփիար
եաններն են կ'ըսեն, Արփիարեանք՝ Դրօ
շակեաններն են կ'ըսեն եւ Դրօշակեանք՝
Հնչակեաններն են կ'ըսեն, ոյքեր ալ լի
նին այդ կարգի ազգասպանները եւ ժս
զովուրդը այս աստիճան ճզակաւոր ը
նողները, մենք ալ իրաւունք կուտանք
ըսելու թէ՛ ամէնը մէկէն ստատանան տանի:

Իսկ դու, ժողովուրդ, փութա՛, աչքդ
բաց, արթնցիր եւ քու այդ ցեցերը, ա
պականիւնները լաւ ճանչցիր, Միութեան
խաղաղանով ձազկէ, վտարէ ամենքն ալ,
զի առաւօտը մօտ է, եւ ժամանակ է
զարթնելու:

Յ. ՉԱՐԲԵԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆԸ

Ժամանակէ մը ի վեր թերթերու մէջ
պարբերաբար յօդուածներ տեսնուեցան
եւ կը տեսնուին միութեան հրատապ
խնդրոյն առթիւ, որոնք տարակոյս չի
կայ թէ՛ ժողովուրդի գէպի միութիւն
ունեցած փափաքի արտայայտութիւններն
են, հեռու ու է կեղծիքէ եւ ազգափնաս
թագուն նկատէ որպէս բլալ կը կար
ծեն շատերը:

Հարցում մ'ընել կը մնայ մեզ, ի՞նչ
ըրին ժողովուրդի պաղատանքներուն եւ
լաց ու կոծին հանդէպ անոր օգտին եւ
բարօրութեանը աշխատիլ կեղծող մեր
յեղափոխականները՝ ո՞չ ապուքէն ձեռ
քերնին ծալած, ակունքնին խցած, չու

գեղին լսել և գործնական միջոցներու գլխել, ժամ առաջ գոհացում տալու համար անոր արդար պահանջին:

Բայց պէտք էր այդպէս ընէին, որովհետեւ մենք այսօր ունինք կարգ մը ուղորմելի և մտքով աղքատ յեղափոխական պարտններ, որոց համար ժողովուրդը կարեւորութիւն և նշանակութիւն չունի, բայց եթէ չըլլայ ժողովուրդ, չը պիտի ըլլայ հայրենիք և հետեւաբար յեղափոխութիւն և նպատակ:

Ուրեմն անոնք պէտք է քաջ դիտան և լու համազօրին որ ժողովուրդ և յեղափոխութիւն անբաժան են իրարմէ, մին միւսին լրացուցիչն է: Այսինքն թէ յեղափոխութիւնն է որ կ'ապահովէ ժողովուրդի մը գոյութիւնը, բայց միևնոյն ատեն առանց անոր նխաձեռն և բարոյական աջակցութեան յեղափոխութիւնը քայլ մ'իսկ չի կրնար առնել, և ինչպէս որ ժողովուրդը դիտցած է գնահատել և անխառն գալիսներով զարդարել ճշմարիտ և անկեղծ հայրենասէրներու ճակատները, այնպէս ալ պիտի գիտնայ որ թուրք և մուրը, իրեն գոյութիւնը ուրոնալու չափ առաջ գացող ստոր և լիւր տրտածներու:

Դիմենք պահ մը անցեալին, պարտներ պատմութեան էջերը, և օգտուիլ գիտնանք անցեալի այդ դառն դասերէն. բացայայտ ճշմարտութիւն մ'է որ ամէն ազգ քայքայման և կործանման ենթարկուած է անմիաբանութեան պատճառաւ, և ուրեմն ցաւալի չէ՞ տեսնել որ այսօր անմիութեան պատճառաւ աւրուած հայրենիք մը, սարուկ ժողովուրդ մը, կ'ուզենք վերականգնել ընթանալով միևնոյն ծուռ և դէպի անդունդ առաջնորդող փշոտ ճամբէն, պատրանք է այս, և մեծ պատրանք:

Եթէ մեր այս զմեզակ կացութեան

մէջ, ներքին բանալուիւնները մէկդի թողլով չը միանանք և միահամուռ չի գործենք, ուրիշ բան չը պիտի ըլլանք, եթէ ոչ թշնամիի ձեռքով քանդուած մեր Մայր Հայրենիքի ծխաշունչ աւերակներու վրայ վերջին հոգեհանդիստ մը կատարած:

Եւ այն ատեն ամօթ մեղի, ամօթ մեր հայ անունին:

ՍՈՒՐԷՆ

ԶԵՅԹՈՒՆ Եւ մինչեւ 1895 թուականի ապտաւաբութիւնը անուամբ Պ. Աղասիի հրատակութեան առթիւ, ֆրանսացի նշանաւոր գրագէտ Պ. Վիլթոն Պեռարի մի յառաջաբանէն թարգմանուած:

(Հարաւակութիւն նախորդ թիւէն և վերջ)

Խօսքս երեսփոխանաց, օրագրողաց, հրատարակախօսաց, հեղինակաց, վերջապէս ամեն անոնց է, որոնք, առաջ անհաշուելի լինելով Արեւելքի այս թշուառութեանց և մարդկային այս փսկալի նախճերնեցուն պատմութեանց մասին իրենց անտարբերութեամբ վայելցուն մի միայն. և մենք, ամենքնիւ ալ լուռ ֆիտցինք, երեք շրջանին մէջ, որպէս զի այս խողխողման գործը աւարտի, այն պատրուակաւ թէ՛ նոյն իսկ զոհերն, իբր աղաւ, առանց դիմադրութեան (օրինաւոր) կ'ընդունէին իրենց վեհապետին հաճոյքը՝ . . . :

Կ'անարգենք Արեւելքի այս քրիստոնեաները և մենք միմիայն իրենց ընչափութիւնը և նուաստութիւնը կը տեսնանք, մենք միայն կը ճանչնանք իրենց դրաւմական և գործօնէական խաղողէները և միայն կը ճանչնանք իրենց կնաւաճառները, իբր թէ՛ առ ոչինչ եղած լինէին այդ մարդիկները և կամ թէ մերինները աւելի արժէքաւոր լինէին. նկատողութեան ասանելով գերի ժողովուրդէ մը պահանջուած յատկութիւնները, քանի՞

քանի՜ հարստահարեալ ժողովուրդներ ալ արժանի պիտի ըլլային աղաւ ըլլալու այսօր :

Սհուռասիկ, տի մը լեռնականներ ու ընդ, դարէ մը ի վեր, երեսուն անգամէն աւելի ապստամբած և յողմեական կերպով պաշտպանած են իրենց կրօնքը և անկախութիւնը : Նոր ապստամբութիւն մը կ'առաջարկուի իրենց :

Փառք քեզ Ստաուած իմ, կը բացառանք հաբիւրամեայ հայ եպիսկոպոսը եղելով իր եղանակաւ Սիմէոն Ծերունւոյն օրհներգը «կրնաս յիշել քո ծառան, հրացոնին հօտը մոռնալ կ'սկսէի և հրաբեմն, յիշելու համար, բուրուռալին մէջ վառօք կը լեցնէի» և ամէնքը ոտքի կ'ելլան և երեք ամիսներ, անօթի, ձիւնին տակ, զիւրազնարար կը զիմադրեն տառնապատիկ աւելի եղող թշնամւոյն բուն հոսկին եւ երբ մի օր պարտութիւնը վերահաս է, երբ դուրսի յարձակումներուն հետ, կ'աղաւանդ միտնալ թուրք բանտարկեալներու ներքին ապստամբութիւնը, կ'իններն ալ զործի գլուխ կ'անցնին, իրենց թեղանկները վեր ժողովելով, խահանջի դանակներով 400 թշուառականներու փոքր կը ճեղքեն : Մենք կը սիրենք կարմիր արիւնը եւ գեղեցիկ սպանութիւնները, մեծ ոճրագործ Սուլթանն ալ մեր երազածին նման է, զէթ անկողնակալ ըլլանք :

LE COMBAT

(ԿՌԻԻ)

ՄԻՋԱԶԳՍՅՈՒՆ ՕՐԿԱՆ

Այս անուամբ մի նոր թերթ սկսած է հրատարակուիլ Աթէնքի մէջ ֆրանսերէն լեզուով չարաթը մի անգամ, որոյ Ա. թիւը զրկուած է մեղ, խմբագիրն է Ն. Պէլէթի. բաժանորդագրութիւնը տարեկան 9, վեցամսեայ 5 և. եռամսեայ 3 ֆրանք. պահարանով ուղղորդող սէտք է վճարին կրկին գին : հասցէ՝ Administration et Rédaction LE COMBAT, Athènes, 1 Rue Lycabette. կը մալթենք բարի յաջողութիւն եւ յարապիտութիւն :

ԹՄՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի ՆՊԱՍՏ

ԱՂՔԱՏԱԽԵ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Օգոստոս 2/14 Եարար գիշեր ժամը 9 ին

ԱՆԿԵ ՍԱՎՈՅՑԻ ՍՐԱՅԻՆ ՄԵՋ

ՏՕՆ ՍԵՋԱՐ ՏԸ ՊԱԶԱՆ

ԿԱՐ

ՊԱՆՍԱԿԱՆ ՈՃԻՐԸ

Բարոյալից Թաարերգութիւն 5 արար

ԿՍԾԻ ՄԱՐԴՈՒ ՄԸ ԿԵԱՆՔԸ

Ծիծաղաշարժ գաւեշտ

ԱՂՔԱՏԵՐԸ

Վաւնայի Աղքատախնամ ընկերութիւնը ինչպէս յայտնի է վերուի ծանուցումէն, չարաթ երեկոյ ներկայացում մը պիտի տայ ի նպատակ վաւնայի զանուցող ամենամիջուռու աղքատաց, կ'իմանանք թէ՛ 89 ի չափ հիւանդներ կը գտնուին՝ վերջին ծայր չքաւոր՝ դաղթականաց պատասպարանին մէջ, որոնք անմիջական խնամքի կը կարօտին :

Աւելորդ կը համարենք այս մասին յորդոր կարգալ. ով որ աղքատութիւնէ կը հասկնայ, անօթի կամ հիւանդ մնացած է, վերջապէս մարդ եմ կ'ըսէ ու զգացում կը կրէ, ձեռքը կ'ըրծքին վրայ թող գնէ և հարցնէ ինքը իւր խոճին թէ՛ թուրքի «սօփա»էն աղաւառած այս դժբաղդ մնացորդներուն պէ՞տք է արդեօք օգնութեան ձեռք կարկառել, թէ թողուլ որ մեր օգիի եւ ազանգերի սեղանին դիմաց անոք ու անխնամ միտնին եւ մենք խայթ չիմանանք եւ մեր խիղճը մեղ չըսէ. «Անասունէն ալ վար անգգամներ» :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՅՐԱՆԲ

—0—

Այն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 Էֆերով, մեծ խնամքով սրբադրուած, բաց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ բազմաթիւ նոր երգեր :

Փափաքողք պէտք է գիմնի տա Մ. ԽԱՅԿԱՆ, Արեւելեան տպարան, 2րդ. Աւաւթ թիւ 1104 Վ.Ա.Ն.Ա. Վաւնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածներուն իւրաքանչիւրին լրաց պէտք է աւելցնել 20 ան. թիւ իրը բազմաթիւ ծախք :

Отговорникъ : П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.